

քէս եւ բոլոր անոնք, որոնք համակարծիք են յիշեալներու հետ :

Նամակին կը կցուի հայերէն հետեւեալ հասցէագիրը .

«Հասնի պրակս ի մեծ մայրաքաղաքն Հոռմ, առ ձեռն մեր հոգեւոր երիցադոյն եղբորն տիեղերալուր եւ հռչակաւոր սուրբ Հայրապետին Տեառն Տեառն Ուրպանոս ութերորդ ամենայն Ֆրանկաց ի բարին . ամէն» :

Ս. Ժողովը կը պատասխանէ առ այս .

Առ կաթողիկոսն Հայոց. 3 Սեպտ. 1633 :

Lettere volgari della S. C. P. F. an. 1633.

T. 13, f. 96:

Լէոպոլսոյ Հայ արքեպիսկոպոսի խնդրոց մասին Սրբազան Քահանայապետը կարգադրած էր Ասպահանի Տ. Եղ. Յովհ. Թադէոսին, որ բանակցի Ձեր Սրբութեան հետ եւ դրած էր առ այս համառօտագիր մը : Ինձ հարկաւորութիւն չի մնար այլ եւս Ձեր Երանութեան առ Նա դրած թղթին, դոր ուղարկած էիք ի ձեռն Սիմէոնի, ի պատասխանի յաւելուլ, բայց եթէ այն թէ Տէր Յովհաննէսէն, որ արդէն մեկնած է, լիովին պիտի տեղեկանաք Նորին Սրբազնութեան մտքին : Ուստի եւ ուրիշ ըսելիք չունիմ :

Նիկողայոս Թորոսովիչ երբ լսեց թէ Ժողովուրդը պատգամաւորութիւն մ'ուղարկած է Հոռմ, աճապարեց եւ ինքը մեկնիլ Հոռմ :